

# ՏԱՐՈՒԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ\*

Ամայա Պողոսյան  
«Չ ԳԱՍ Լեզվի ինստիտուտ»

Սույն հետազոտությունը քննության է առնում տաբուի լեզվամշակութային առանձնահատկություններն ու առաջացման ուղիները: Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ տաբուներն առաջանում են տվյալ լեզվով խոսող ժողովրդի պատմության ողջ ընթացքում: Տաբուները արգելաբառեր են, որոնք արտացոլում են տաբու ստեղծող և գործածող ժողովուրդների հոգևոր-նյութական լեզվամտածողությունը, արժեհամակարգը, հոգեկերտվածքը, քաղաքակրթվածության մակարդակը: Ըստ ամենայնի, որևէ լեզվում տաբուների գոյությունը, շատ կամ քիչ լինելը պայմանավորված է տարաբնույթ նախապաշարումներին տուրք տալու հանգամանքով:

**Բանալի բառեր.** Լեզվական տաբու, էթնոմշակույթ, առօրյախոսակցական լեզու, բարբառ, մտածողություն, հավատալիքներ:

## Ներածություն

Լեզուն այն գլխավոր միջոցն է, որի օգնությամբ կազմակերպվում է հասարակական կյանքն ու կենսագործունեությունը: Լեզվի հաղորդակցության միջոց լինելու հարատև գործընթացում լեզուն ինքնին դառնում է տարատեսակ մշակութային արժեքների կրողը, բացահայտողը և ներկայացնողը: Ինչպես լեզվական ցանկացած միավորի, այնպես էլ արտաբերած տաբուների միջոցով մարդիկ ներկայացնում են իրենց իմաստակիր և տրամաբանական միտք – դատողությունները դառնում են օբյեկտիվ իրականության փաստերի, երևույթների, դպքերի կամ իրադարձությունների արձանագրողները: Արտահայտված տաբուները արտացոլում են նաև խոսողի վերաբերմունքն ու հավատալիքները, հոգեկերտվածքն ու լեզվամտածողությունը:

## Տաբու, լեզու, մշակույթ

Լեզուն և մշակույթը իրար հետ սերտորեն կապված են և, կարելի է ասել, առանց մեկը մյուսի գոյատևել չեն կարող: Լեզվի միջոցով ներկայացվում է մշակույթը, իսկ մշակույթը դառնում է լեզվի բովանդակությունը: Իզուր չէ, որ մշակույթի մեջ առկա ցանկացած երևույթ, անտարակույս, պետք է ունենա իր լեզվական դրսևորումը տվյալ հասարակության մեջ: Մյուս կողմից, լեզվի միջոցով է, որ մշակութային արժեքները պահպանվում են և փոխանցվում սերնդեսերունդ:

Տաբուն հասարակության մշակութային արժեքների և ազգային մտածողության արտահայտման ձևերից է և տվյալ հասարակության մեջ դրսևորվում է նախ և առաջ լեզվի միջոցով: Լեզվական տաբուն կամ լեզվում որոշակի բառերի և արտահայտությունների գործածման սահմանափակումը բնորոշ է գրեթե բոլոր հասարակություններին: Տաբուի պատմությունն այնքան հին է, որքան հենց ինքը

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 03.02.2017:

լեզուն: Տաբու բառերի գործածումը, կապված լինելով քաղաքավարության և բարոյական արժեքների պակասի հետ, կարող է լայն տարածում և խոսքային արտահայտում չունենալ հասարակության մեջ, թեև մարդիկ, չօգտագործելով հանդերձ, քաջ ծանոթ են դրանց (Kamal 2010):

Ըստ ամենայնի, լեզվական մշակույթ ձևավորողները լեզուն կրող հանրույթներն են: Պատահական չէ, որ մի շարք առումներով տվյալ խոսողի տեսակետը կարող է համընկնել միևնույն հասարակության մյուս ներկայացուցիչների արտահայտած նույնաբովանդակ տեսակետների հետ: Այս հարցում կարևոր է միևնույն լեզվամտածողությունը՝ որպես լեզվամշակութային արժեքների սերնդեսերունդ ավանդված միասնական հաստատուն համակարգ: Ինչպես փաստում է անգլիացի հետազոտող Կլաիեր Կրամշը, լեզուն արտահայտում և մարմնավորում է մշակութային իրականությունը (Kramsh 2009:3):

Լեզուն նաև հասարակական երևույթ է, քանի որ ընդհանուր է միևնույն լեզվով խոսող մարդկանց համար: Լեզվի հասարակական երևույթ լինելու առնչությամբ Հ. Աճառյանը (1955:110) գրում է. *Ինչպես մարդ սկզբից ևեթ հանդես է գալիս որպես հասարակական կենդանի, այնպես էլ լեզուն սկիզբ է առնում հենց հասարակության հետ: Ոչ կարելի է ենթադրել հասարակություն առանց լեզվի, և ոչ լեզու՝ առանց հասարակության: Չկա հասարակական երևույթների մեջ մի ավելի ընդհանրական երևույթ, քան լեզուն. իր ամենանախնական վիճակից մինչև ամենաբարձրը չի կարելի երևակայել մի հասարակություն, որ կարողանար առանց լեզվի շարունակել իր գոյությունը:*

Եթե պատկերավոր կերպով առօրյախոսակցական լեզուն և բարբառները ներկայացնենք որպես երկրագնդի երկրակեղևը և այն հողը, որի վրա աճում և տարածվում է մեր հասարակական կյանքը, ապա արգելված բառերը՝ տաբուները, նման են հրաբուխներին և գեյզերներին, որոնք ժամանակ առ ժամանակ ժայթքում են երկրի ընդերքից: Մեր հասարակական ավանդույթներն ու մշակույթը, նախապաշարուններն ու հավատալիքներն էլ որոշում են, թե երկրակեղևի որ հատվածն է ավելի բարակ: Բավականաչափ դժվար է վերջնականապես որոշել տվյալ բառի արգելաբառ լինելը կամ չլինելը: Եթե որևէ բառ կամ բառային իրողություն (երևույթ) ցանկանում ենք համարել արգելված բառ կամ արգելաբառ, ապա այն պետք է ունենա հասարակական ուժ ու բովանդակություն, ազդեցություն և որոշակի սոցիալական բնույթ՝ արտահայտված որոշակի հոգևոր, աշխարհայացքային ու նյութական հենքով:

Լինելով հասարակական երևույթ՝ լեզուն կապված է նաև հասարակական ըմբռնումների և հավատալիքների հետ: Հենց հասարակական ու մշակութային ըմբռնումների և հավատալիքների հետևանքով էլ առաջանում են լեզվական տաբուները: Տաբուների քանակն ու գործածության հաճախականությունը սերտորեն պայմանավորված են տվյալ հասարակության արժեհամակարգով ու զարգացվածության ու քաղաքակրթվածության մակարդակով: Տաբուներն իրենց մեջ ներառում են ինչպես վիրավորական բառեր, հայիոյանքներ ու գռեհկաբանություններ, այնպես էլ մշակութային նախապաշարուններից առաջացած սովորական բառեր: Սովորական բառերը, ըստ էության, հիմնականում համագործածական բառաչերտի մաս կազմող բառամիավորներն են, որոնցով նախևառաջ կազմակերպվում է մարդկանց կենսագործունեությունը՝ առօրյա կյանքը, զբաղմունքները և այլն:

Այս հետազոտության ուշադրության առարկան հենց մշակութային նախապաշարումներից առաջացած լեզվական տաբուներն են, որոնց միջոցով կարելի է որոշակի գաղափար կազմել տվյալ հասարակության արժեհամակարգի, լեզվի և մտածողության մասին: Օրինակ, հայերենի *արջ* կենդանանունը բնիկ հնդեվրոպական բառ է (Աձառյան1926:334): Այս բառն առաջացել է հնիս. *\*rktho* ձևից, և հնդեվրոպական մյուս լեզուները ժառանգել են բառի բազմաթիվ տարբերակներ՝ հնչյունական զանազան փոփոխված տարբերակներով, ինչպես օրինակ՝ լատ. *ursus*, իտալ. *orso*, կիմր. *arth* բառերը և այլ բառեր: Ըստ եղած տվյալների՝ ամենահին ժամանակներից այս բառը եղել է տաբու: Այդ իսկ պատճառով էլ *\*rktho* նախաձևը բազմազան ձևափոխությունների կրողն է եղել հնդեվրոպական բոլոր լեզուներում և, մասնավորապես, հայերենում: Տաբու լինելն է պատճառ, որ բալթիկ-սլավոնական, գոթական լեզուներն իսպառ ջնջել են այս բառը իրենց բառապաշարից, և այս կենդանանվան իմաստն արտահայտելու համար ստեղծել են նոր դարձվածքներ ու բառակապակցություններ, ինչպես օրինակ՝ ռուսերենում *մեդվուդ* (*медведь*)<sup>1</sup>, անգլերենում *թուխ* (*bear*)<sup>2</sup> և այլն: Անգլերենում *արջ* բառի նախնական ձևը պահպանվել է Մեծ և Փոքր Արջ համաստեղությունների անվան մեջ՝ *Ursa Major* և *Ursa Minor*: Պատահական չէ, որ հայերենի բազմաթիվ բարբառներում և տարածքային խոսվածքներում նույնպես *արջ* բառի գործածությունները բացակայում են: Այդ կենդանանվան իմաստն արտահայտվում է այլ լեզվական կառույցների՝ պարզ ու բաղադրյալ բառերի, ինչպես նաև բառակապակցությունների միջոցով, ինչպիսիք են՝ *քեռի*, *տանձակեր*, *լեռան ծաղկակոխ* և այլն: Կարծում ենք՝ հնդեվրոպական լեզուներում *արջ* կենդանանվան տաբուի վերածումը պայմանավորված է այդ կենդանու գիշատիչ լինելու հանգամանքով, քանի որ որքան էլ ժողովրդական հեքիաթներում և ավանդազրույցներում արջը ներկայացվում է որպես մարդու բարեկամ, այդուհանդերձ այն գիշատիչ կենդանի է և ունի մարդկանց ստեղծած բարիքները առևանգողի և ոչնչացնողի համբավ, ինչպես նաև՝ անզան սպառնալիք է մարդու կյանքին: Չենք բացառում նաև այն, որ *արջ* բառը որևէ գերբնական ուժի, պաշտամունքային իրողության հետ ունեցած կապի հետևանքով ինչ-որ ժամանակաշրջանում վերածված լինի արգելաբառի: Հետաքրքիր է այն փաստը, որ հայերենում գործածվող մեղմասացությունները չեն փոխարինել բուն բառին, այլ մնացել են ժողովրդի խոսակցական լեզվում միայն, մինչդեռ ինչպես տեսանք վերը նշված օրինակներում, քննված մյուս լեզուներում բուն հնդեվրոպական նախաձևն ի վերջո փոխարինվել է մեղմասացությամբ, որն էլ արդեն մտել է ժողովրդի հիմնական բառաֆոնդ: Չի բացառվում, որ նույն նախապաշարումներից դրդված մի օր էլ այդ բառերը կփոխարինվեն նորերով:

Որպես տաբուի առաջացման ուղի և հիմք՝ կարևոր են պաշտամունքային դավանանքները, մարդու կապը գերբնական ուժերի հետ: Որոշ երևույթներ և առարկաներ համարվել են սուրբ և միստիկ, արգելված է եղել արտաբերել անզան նրանց անունները, իսկ որոշ դեպքերում արգելված է եղել արտաբերել նաև այն բոլոր բառերը, որոնք այս կամ այն չափով նման են եղել այդ բառին: Օրինակ, հայերենում խիստ տարածում ունի այն երևույթը, որ որդին իր նորածին երեխային անվանակոչում է ողջ կամ մահացած հոր կամ մոր անունով՝ որպես պատվո և հարգանքի նշան: Սակայն ինչ-որ գերբնական նախապաշարումներից դրդված՝ չեն արտաբերում պապիկի կամ տատիկի այդ անունը երեխային դիմելիս կամ նրա մասին խոսելիս՝ փոխարինելով այն այլ անվամբ կամ գործածե-

լով *եղբայր* և *քույր* բառերի հնչյունապես աղճատված *ապեր*, *քուրիկ* տարբերակները: Ստեղծված տաբուն, ամենայն հավանականությամբ, կապված է ինչպես ողջ կամ մահացած պապի անվան նկատմամբ ունեցած պատկառանքով, այնպես էլ որոշակի գերբնական նախապաշարունով, որի հիմքում ընկած են վախը և որոշակի տոտեմային նախապաշարունները: Անվանադրման այս դրսևորումները տաբուներ են, քանի որ բացասական նախապաշարունը լեզվական տաբու կիրառելու հնարավորություն է տալիս:

Համամարդկային լինելով հանդերձ՝ տաբուն նաև խիստ մշակութային երևույթ է, քանի որ լեզվում տաբուներ առաջանում են հենց մշակութային մտածողության հետևանքով և համապատասխանորեն տեղ են գտնում նաև տվյալ հասարակության լեզվի մեջ: Լեզվական տաբուներն ինքնին վերաճում, դառնում են հասարակության մշակութային արժեքերը և հավատալիքներն արտացոլող իրողություններ, որով էլ իրարից զանազանվում են տարբեր ազգերը: Օրինակ, տարբեր ազգերի մոտ օձը ներկայացվում է տարբեր հատկանիշներով՝ իմաստնությամբ, ստորությամբ, խորամանկությամբ և այլն: Եթե քրիստոնեական դավանանք ունեցող հանրություններում օձը բացասական երանգներով է ներկայացվել և վախ առաջացրել մարդկանց մոտ՝ գիշատիչ, մահաբեր սողուն լինելու հանգամանքով պայմանավորված, ապա իսլամական և մահմեդական հանրություններում օձը համարվել է պաշտամունքային, դրական կենդանի: Հենց սրանով է պայմանավորված, որ հատկապես հնդեվրոպական լեզուներում *օժ* բառը համարվել է տաբու: *Օժ* բառը բնիկ հայերեն բառ է և առաջացել է հնդեվրոպական նախնական \**angʷhi* ձևից (Աճառյան 1926:611): Հնդեվրոպական բոլոր լեզուներում այս բառը զանազան հնչյունական փոփոխություններ է կրել: Այս հանգամանքը հիմք ընդունելով՝ լեզվաբանները գտնում են, որ սողունի այս անունը դարձել է տաբու: Ամեն մի լեզու որևէ կերպ ցանկացել է խուսափել ու այլափոխել այս բառը կամ նրա փոխարեն գործածել այլ բառամիավոր: Հայերենում այն արտահայտվել է *օժ* և *իժ* տարբերակներով: Անգլերենում ունենք *snake*<sup>3</sup> բառը, որն առաջացել է *սողացող* բառից, իսկ ռուսերենում *змея*,<sup>4</sup> որն առաջացել է *հող, երկիր* բառերից:

Այնուհանդերձ, մշակութային տաբուներից բացի կան նաև ունիվերսալ տաբուներ, որոնք հատուկ են գրեթե բոլոր ազգերին: Օրինակ՝ այդպիսի են հենց հայիոյաբանությունները, գռեհկաբանությունները, սիհաճ բառերը, ի վերջո՝ անեծքները: Որպես սիհաճ բառի վերաբերող մեկ օրինակ՝ բերենք հայերենի *գուգարան* բառը: Այն կապված է հայերենի *գուգել* բայի իմաստափոխության հետ և վերածվել է արգելաբառի: Այդ տեղանիշ բառի հասկացական նշանակության հիմքում ընկած է ամոթի զգացողության նախապաշարունը, ուստի և մարդիկ խուսափում են այն հնչեցնել: Ի դեպ, հավանաբար սա է պատճառը, որ հայերենում նրա գրական և տարածքային տարբերակներում, այս բառ-հասկացությանը համարժեք բազմաթիվ այլ բառեր կան, այդ թվում՝ փոխառյալ, ինչպիսիք են *փողոց*, *օտաց ճանհա*, *արտաքնոց*, *տուալետ տվալետ* և այլն:

Կարելի է ասել, որ լեզվական տաբուն հանրությունների կենցաղի, կենսակերպի, էթնոմշակութային արելակերպի լեզվական արտահայտությունն է, որի ակունքները գտնվում են լեզվական տաբու գործածող անձանց ազգային հոգեբանության մեջ: Սա ինքնին դառնում է քաղաքակրթությունների տարբերակման հիմունք և չափանիշ՝ արտահայտված լեզվական որոշակի համակարգերով: Լեզվական տաբուն որոշակի արգելքների արտահայտման հաղորդակցական

միավոր է և, սրանով պայմանավորված, հոգևոր-մշակութային ավելի խորքային հիմքեր ունի: Բերենք մեկ այլ օրինակ, որ ընծեռում է հայերենը: Հայերենի մի շարք բարբառներում մինչ օրս սովորական է այն, որ կանայք խուսափում են իրենց ամուսինների անունները տալ՝ պայմանավորված որոշակի անհասկանալի վախերով: Ամուսինների անուններ հնչեցնելը, ըստ ամենայնի, արգելված է հասարակական միջավայրերում: Այսպիսի գործելաոճով կանայք իրենց պատկառանքն ու հարգանքն են ի ցույց դնում ամուսինների նկատմամբ: Որպես դրանց լեզվական փոխարինիչներ՝ հանդես են գալիս *գլխավոր, էրիկ, մարդ/մառտ, էրիկ/մառտ* բառամիավորները: Նմանատիպ երևույթ կարելի է հանդիպել նաև հարավային Աֆրիկայի մի շարք ցեղերում, որտեղ արգելվում է արտասանել սկեսրայրի, սկեսրոջ, ինչպես նաև ամուսնու եղբայրների անունները և ցանկացած այլ բառ, որ արտասանությամբ նման է այդ անուններին: Այս ձևով նրանք իրենց հարգանքն են ցույց տալիս ամուսնու նկատմամբ, որը բնավ չի նշանակում, որ այս անունները մեկ ուրիշ համատեքստում ունեն վիրավորական իմաստ (Աճառյան 1955:221):

Առանձին քաղաքակրթություններում տաբուն ի սկզբանե եղել է արգելքների որոշակի համակարգ, որի խախտումը և անտեսումը կարող էր դառնալ առասպելական և ճակատագրական, ինչու չէ՞ երևակայական ուժերի պատժի հիմք: Արդի լեզուներում լեզվական տաբուների հոգևոր-նյութական հիմքերն ուղղակիորեն արտացոլում են առասպելական ուժերի և մահկանացուների միջև եղած անջրպետը: Ըստ ամենայնի, որոշակի նախապաշարումների հաղթահարման նպատակով է, որ մարդիկ գործածում են որոշակի տաբուներ: Հայերի մեջ լայն տարածում ունցող հենց այդպիսի տաբու էր ողջ կամ մահացած տատիկի կամ պապիկի անունով նորածին երեխային տրված անունը չհնչեցնելը:

### Եզրակացություն

Որպես ամփոփում՝ նշենք, որ ինչպես վերոնշյալ լեզվական փաստերն են ցույց տալիս, տաբուների առաջացման ուղիները տարբեր են: Արգելաբառերն առաջանում են տվյալ լեզվով խոսող ժողովրդի պատմության ողջ ընթացքում՝ արտացոլելով նրանց հոգևոր-նյութական մտածողության ողջ գունապանակը: Տաբուների գոյությունը ցանկացած լեզվում, նրանց շատ կամ քիչ լինելը ցույց է տալիս, թե տվյալ հանրույթը որքանով է տուրք տվել կամ տալիս նախապաշարումներին, իսկ տաբուները հաղթահարող լեզվական իրողությունների գործածություններով պարզ է դառնում, թե տվյալ լեզվով խոսող ազգերն ինչպիսի քաղաքակրթվածության մակարդակ և զարգացվածության աստիճան ունեն:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուսերեն *медведь* (*արջ*) բառն առաջացել է նախասլավոնական *\*medvǣdъ* (սկզբնական իմաստն է «մեղր ուտող»)՝ առաջացած *мѣд* (մեղր) և *\*ǣd-* (ուտել) արմատներից), որը հանդիսանում է տաբուի հետևանքով անհետացած հ.ե. ձևի փոխարինում. *\*r̥kʷos* (հնտ. հին հնդ. *r̥kṣas*, հին հուն. *ἄρκτος*, լատ. *ursus*) (Этимологический словарь русского языка Макса Фасмера 1964-1996):

2. *Bear/ursa* (արջ) բառն առաջացել է հին անգլերեն *bera` արջ* բառից, որն իր հերթին առաջացել է նախագերմանական *\*beron* ձևից, բառացի գորշը, շագանակագույնը նախահնդեվրոպական *\*bher` վար, շագանակագույն* ձևից (տես *brown* (ած.) (շագանակագույն) (ած.): Հուն. *arktos* և լատ. *ursus* ձևերը պահել են նախահնդեվրոպական արմատը *bear* (արջ) բառի համար (*\*rtko*; տես *Arctic*), սակայն ենթադրվում է, որ այն փոխարինվել է որսորդների` վայրի կենդանիների անունները տաբու համարելու պատճառով (հմմտ. համարժեքները` իռլանդերեն *լավ հորթ, ուելսերեն մեղրի խոզ, լիտվերեն լիզոդ, ռուսերեն մեղր ուտոդ*): Գերմաներեն բառը կապում են նաև լատիներեն *ferus` վայրի* բառի հետ, որը հավանաբար նշանակել է *հյուսիսային անտառների վայրի կենդանի* (Online Etymology Dictionary 2016):
3. *Snake/serpent* (creeping)` *օձ* (սողացող) բառն առաջացել է գոթերեն *nadre*, հին անգլերեն *snaca*, նախագերմանական *\*snakon* ձևերից, նախահնդեվրոպական *\*sneg` սողալ, սողացող բան* արմատից: Ժամանակակից անգլերենում *snake* բառն աստիճանաբար գործածությունից դուրս է մղել *serpent* ձևը, թեև ավանդաբար վերաբերել է բրիտանական *serpent* ձևին` ի տարբերություն թունավոր օձ խորհրդանշող *adder* բառի (Online Etymology Dictionary 2016):
4. Տարուացված անվանումը` *երկրային, հողի վրայով սողացող*, առաջացել է *земля* բառից (հմտ. ալբ. *dhemju թրթուռ, dhemizu, dheh երկիր, հող* ձևերից) (Этимологический словарь русского языка Макса Фасмера 1964-1996):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Է. (1976) *Արդի հայերենի բացատրական բառարան*: Երևան: Հայաստան հրատ.:
2. Աճառյան, Հ. (1926) *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՊՀ հրատ.:
3. Աճառյան, Հ. (1955) *Լիակատար քերականություն հայոց լեզվի*: Երևան: ԳԱ հրատ.:
4. Kramsh, C. (2009) *Language and Culture*. Oxford: OUP.
5. Kamal, M. Khan; Parvaiz, A. (2010) *A Descriptive Analysis of Diminishing Linguistic Taboos in Pakistan*. // *Language in India*; Vol. 10 Issue 8, p 168. Available at: <[http://www.academia.edu/24430046/A\\_Descriptive\\_Analysis\\_of\\_Diminishing\\_Linguistic\\_Taboos\\_in\\_Pakistan](http://www.academia.edu/24430046/A_Descriptive_Analysis_of_Diminishing_Linguistic_Taboos_in_Pakistan)> [Accessed December 2016].
6. *Online Etymology Dictionary* (Copyright 2016) Available at: <<http://www.etymonline.com/index.php>> [Accessed September 2016].
7. *Этимологический онлайн-словарь русского языка Макса Фасмера* (1964-1996) Available at: <<https://vasmer.lexicography.online>> [Accessed September 2016].

### **Linguistic Taboos: Linguocultural Value and Origin**

The linguistic taboo is a means to express cultural values and national mentality. In the society, it is expressed first of all through language. The linguistic taboo or the fact of avoiding mentioning certain words and expressions in a language is a common practice in more than one society. The linguistic material investigated in the article allows us to conclude that taboos are formed during the whole history of the nation speaking some particular language and reflect their spiritual-cultural colourful palate. On the other hand, euphemisms used instead of taboo words show the level of civilization of the nation.

### **Лингвокультурное значение и происхождение табу**

Табу является одной из способов выражения культурных ценностей и национального менталитета и в обществе выражается прежде всего с помощью языка. Языковое табу или факт избежания упоминания определенных слов и выражений в языке является обычной практикой в более чем одном обществе. Изученные лингвистические материалы в статье позволяют нам сделать вывод, что табу формируется на протяжении всей истории нации говорящим на конкретном языке и отражает духовно-культурную разноцветную картину. С другой стороны, эфемизмы, используемые вместо табуированных слов, показывают уровень цивилизованности нации.